ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 12-Լ

Թիվ 47-Լ

<<ՆԵԼԵԳԱԼ-2023>> ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱՆՎԱՄԲ ՕՊԵՐԱՏԻՎ-ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով երրորդ երկրների քաղաքացիների անօրինական միգրացիայի հակազդմանն ուղղված <<Նելեգալ-2023>> պայմանական անվամբ օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումը կազմակերպելու և իրականացնելու մասին ՀԱՊԿ անդամ-պետությունների իրավասու մարմինների ղեկավարների անօրինական միգրացիայի դեմ պայքարի հարցերով կոորդինացիոն խորհրդի և ՀԱՊԿ քարտուղարության որոշումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. Ստեղծել Ազգային շտաբ հետևյալ կազմով՝

- ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վարդան Գևորգի Վարդանյան (շտաբի ղեկավար),
- ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈ ԳՎ ՀԱՄԱԴՊՎ պետ, ոստիկանության փոխգնդապետ Ռաֆայել Արամայիսի Պողոսյան,
- ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈ ԳՎ ՀԱՄԱԴՊՎ պետի տեղակալ, ոստիկանության մայոր Հաբեթ Հակոբի Մկրտչյան,
- ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈ ԳՎ ՀԱՄԱԴՊՎ ԱՄԴՊ բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Դավիթ Բաբկենի Ավետյան,
- ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈ ԳՎ ՀԱՄԱԴՊՎ ԱՄԴՊ բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Արմեն Մարտինի Մկրտչյան,
- ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության ԱՎ վարչության վիզաների և օտարերկրյա քաղաքացիների հաշվառման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Վահե Ռուբիկի Բալաբեկյան,
- ՀՀ ԱԱԾ աշխատակից, փոխգնդապետ Վաղինակ Աշոտի Բաղեյան,

- ՀՀ ԱԱԾ ՍՀ աշխատակից, փոխգնդապետ Արթուր Վոլոդյայի Գևորգյան,
- ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության աշխատանքային միգրացիայի և մոնիտորինգի բաժնի պետ Վարդան Ազատի Մաթևոսյան:

2. Ազգային շտաբի ղեկավարին՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում <<Նելեգալ-2023>> պայմանական անվամբ օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման կազմակերպչական աշխատանքներն իրականացնել ՀԱՊԿ անդամ պետությունների իրավասու մարմինների ղեկավարների անօրինական միգրացիայի դեմ պայքարի հարցերով կոորդինացիոն խորհրդի կողմից առաջադրված մտահղացմանը և ալգորիթմին համապատասխան,

2) <<Նելեգալ-2023>> պայմանական անվամբ օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման առաջին փուլը կազմակերպել 2023 թվականի հունիսի 19-ից հունիսի 25-ը, երկրորդ փուլը՝ հոկտեմբերի 02-ից հոկտեմբերի 08-ը,

3) միջոցառման արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով մշակել օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման պլան,

4) միջոցառման ընթացքի և արդյունքների մասին պարբերաբար զեկուցել:

ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ

Վ.ՂԱԶԱՐՅԱՆ

<<03>> 06 2023թ.

ք.Երևան

Ա.ԱԲԱՋՅԱՆ

<<19>> 06 2023թ.

ք.Երևան